

«Մայրենիի պաշտպան» շարքից

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ՕՋԱԽ՝ ՆՈՎՈՑԵՐԿԱՍՍԿՈՒՄ



Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քահանա Տեր Անանիա Բաբայանը, կենտրոնի ստեղծման անհրաժեշտության մասին խոսելիս, կարևորեց մատաղ սերունդների հայեցի դաստիարակությունը, հայապահպանությունը և հայկական մշակութային ժառանգությանը տեր կանգնելը:

«Երկու բարեկամ ժողովուրդ՝ հայ և ռուս, դարերով պայքարել, արարել, կռվել են պատերազմներում ու միասին կերտել են իրենց ճակատագիրը: Քրիստոնեական հավատքն ու հոգևոր արժեքների համար պայքարն այսօր էլ միավորում է հայ և ռուս ժողովուրդին: Ռուսաստանը, չունենա-

«301 թվականից հայերը լուսավորված են Քրիստոսի լույսով և քրիստոնեությունն ընդունել են որպես պետական կրոն: Հայ ժողովուրդը բազմաշարժար ու տառապալ ազգ է, որն անցել է ոչնչացման հնցով, բայց այսօր ապրում ու արարում է: Ինչու: Որովհետև առաջնորդել է Աստված, պահել ու պահում է Աստված: Այսօր էս տեսնում եմ ինչպիսի սիրով ու հավատով են աշխատում այստեղ քարից մինչև գիր ու գրականություն», — ասաց ռուս ուղղափառ Սուրբ Միքայել հրեշտակապետի անվան եկեղեցու հոգևոր հովիվ Օլեգ Դոբրինսկին:



Սույն թվականի սեպտեմբերի 21-ին Ռոստովի մարզի Նովոչերկասկ քաղաքի Հայ Առաքելական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից բացվեց Հայորդաց տուն, որին մասնակցում էին Նովոչերկասկ քաղաքի վարչակազմի ղեկավարի տեղակալ Իգոր Տիշկունովը, Դոնի Ռոստովի Սուրբ Հարություն եկեղեցու քահանա Տեր Տիրան Ավագյանը, Մեծ Մալա գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու քահանա Տեր Աշոտ Ղազարյանը, ռուս ուղղափառ Սուրբ Միքայել հրեշտակապետի անվան եկեղեցու հոգևոր հովիվ Օլեգ Դոբրինսկին, Դոնի կազակների պատրիարքական տաճարի հովիվ Գեորգի Սմոլկալովը, Ռոստովի մարզի հայերենի խմբակների ուսուցիչները, բարերարներ, ինչպես նաև Նովոչերկասկի հայ համայնքի ներկայացուցիչներ:



Թովմաս Հովհաննիսյանի, Էրիկ Նահապետյանի, Սամվել Պետրոսյանի անավարտ կյանքի, գործի ու երազանքի շարունակությունը:

Շնորհավորելով ներկաներին հոգևոր-մշակութային կենտրոնի բացման կապակցությամբ՝ Նովոչերկասկի վարչակազմի ղեկավարի տեղակալ Իգոր Տիշկունովը բարձր գնահատեց բազմազգ, բազմակրոն քաղաքում նման մշակութային կենտրոն ունենալը, որը ոչ միայն հայ համայնքի ներկայացուցիչների համար է, այլև ամբողջ քաղաքի:

Նովոչերկասկի Հայորդաց տան բացումը ազդարարող խորհրդանշական կարմիր ժապավենը կտրեցին հովիվներ Օլեգ Դոբրինսկին, Տեր Անանիա Բաբայանը և քաղաքի վարչակազմի ղեկավարի տեղակալ Իգոր Տիշկունովը:

Գեղեցիկ հարդարված դասարանում՝ ուսուցչուհի Աննա Բեգլարյանի ղեկավարությամբ, հայերենի խմբակի առաջին հայրենասիրական բաց դասն էր: Շուրջ երկու տասնյակ աշակերտ հայերեն և ռուսերեն, ներկայացրեցին մեր լեզուն, պատմությունն ու մշակույթը:

Ուսուցչուհին շնորհավորեց աշակերտներին ու ծնողներին՝ նման կրթօջախի բացման կապակցությամբ և վստահեցրեց, որ այն կդառնա երեխաների կրթության, դաստիարակության կարևոր կենտրոն:

Միջոցառման մասնակիցներն ունկրդրեցին հայկական դուդուկի դյուրիչ հրնչյունները՝ դուդուկահար Արտյոմ Մարկիսյանի կատարմամբ, գեղեցիկ մենապարով հանդես եկավ «Կարս» պարային համույթի գեղարվեստական ղեկավար Ադուհիկ Տեր-Հովհաննիսյանը, իսկ ուսուցչուհի Աննա Բեգլարյանը կատարեց Կոմիտասի «Դե, յաման» և «Չորովե» ժողովրդական երգերը:

Միջոցառումն ավարտվեց հայկական ավանդական հյուրասիրությամբ:

Ալիա ԱՋԱՎՈՒՅԱՆ
Фото Ксении РЕЗНИКОВОЙ

ԴՊՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԲՆՈՑ, Ի՛Մ ԴՊՐՈՑ

Ուր որ հայրենի երգեր կլսվին՝
Հոն հայրենիքը ողջ է...

Ղ. Ալիշան

Նորից դողանջում է զանգը դպրոցի, և բոլորիս իր գիրկն առնում ջերմագին: Վերսկսում ենք ուսումնական տարին փոքրիկ կրթօջախներ ստեղծած Սփյուռքում:

Հայ ազգն իր քաղաքակրթության պատմության մաքառումների ընթացքում իր հենքերն է թողել աշխարհի գրեթե բոլոր անկյուններում: Դիմակայելով ճակատագրի հարվածներին ու փորձություններին՝ ամենուր ձգտել է պահպանել Մշակույթը, Լեզուն, Հավատը, և մենք՝ ուսուցիչներս՝ անխոնջ նվիրյալներս, մաքառումի բովով քայլում ենք անընդմեջ և մեզանից յուրաքանչյուրը փորձում է դարձնել լույս սփռել ամենուր: Մեր ազգի ինքնությունը դարձրեք շարունակ խարսխված է եղել լեզվի, կրոնի, ազգային մշակույթի պահպանման ու տարածման վրա: Սփյուռքում հայ ինքնության պահպանման համար չափազանց կարևոր է մայրենի լեզվի իմացությունը և սրբազանորեն պահպանումն ու փոխանցումն ամեն հաջորդ սերնդին: Կրթված ու գիտակից սերունդը երկրի առաջընթացի առաջին երաշխիքն է, իսկ հաջորդությունները կրթության ոլորտում՝ մեր երկրի կայացման կայուն հիմնաքարը: Մեզ պետք է առաջնորդի այն գիտակցությունը, որ լեզուն ազգի բյուրեղյա, պղծված արժեքն է՝ աստվածապարզն էությունը:

Այսօր էլ ապրում է Սփյուռքը իր մշակութային կյանքով՝ անցյալի ժառանգությունը պահպանելու, իր առջև դրված կարեվորագույն խնդրով: Եվ այդ կարևորագույն խնդիրները որդեգրած՝ Բատայակ քաղաքը ևս ամանն չմնաց լրացուցիչ կրթության կենտրոնում բացվեց հայկական դասարան, հնչեց ուսումնական տարին ազդարարող զանգի առաջին դողանջը:

Եվ այս ծրագրերը կյանքի չէին կոչվի, եթե ազգապահպան գործի անխոնջ նվիրյալ ուսուցիչների կողքին մշտապես կանգնած չլինեին պետական ու ազգային գաղափարների կրող համայնքային այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Արմեն Սուրենի Գասպարյանը (Բատայակի քաղաքային դումայի պատգամավոր), Մեդրակ Գրիգորի Սահակյանը (Ռոստովի մարզային հայ-եզդիական հասարակական կազմակերպության մշակութային և ժամանցի «Արջա» կենտրոնի ղեկավար): Նրանց շնորհիվ է, որ մենք՝ ուսուցիչներս, կարողանում ենք Սփյուռքում հայ երեխաների կրթությունը դնել ազգային հիմքերի վրա և Սփյուռքի մեր համայնքում ամեն մի բացվող դասարանը դարձնել մի փոքրիկ Հայաստան:

Ուստի, եկե՛ք փառաբանենք ու սովորենք մեր Մայր լեզուն, այն բարձր լեռներից ու խորունկ ձորերից ծնված լեզու է, մեր սրբությունն է, մասունքը հանուր մարդկության:

Շնորհավոր Սեպտեմբերի 1, և թող բոլորիս արշալույսները խաղաղ բացվեց...
Ռուզաննա ԿԱՐՄԵՏՅԱՆ



Желающие изучать армянский язык и культуру в Батайске, обратитесь по телефону +7 (961) 299-10-51

